

Վազգեն Գ. Համբարձումյան
Բանասիր. գիյր. դոկտոր

**ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՅԵՐԵՆ
ԲԱՆԱՍՏԵՂԾԱԿԱՆ ԽՈՍՔԻ ԵՐԿԱՏՈՒՄԱՅԻՆ
ԱՌԱՆՁՆԱՅՈՒՄԸ**

(ցեղակից լեզուների հետ առնչությունների համատեքստում)*

Բանալի բառեր – երկատում (դիխտոմիա), բանաստեղծական խոսք, ցեղակցային առնչություն, ստուգաբանական վերանայում, վերականգնում, համեմատություն ցեղակից լեզուների տվյալների միջև, հայերենի նոր տվյալների օգտագործում:

Մուտք

Իրականության երկատումային առանձնացումը (դիխտոմիկ դիստրիբուցիա)՝ իբրև մտածողության ձև, հատուկ է եղել նաև հնդեվրոպական նախալեզուն կրող ժողովուրդներին, որի՝ տարբեր բնույթի արտացոլումներ հայտնի են ցեղակից լեզուների վիպական (առասպելական-բանաստեղծական) հատվածներում: Սույն հոդվածում կանդրադառնանք նման արտացոլումներից մեկին, հատկապես՝ այդ բնագավառում կուտակված նոր տվյալների համադրմամբ, առանձին դեպքերում՝ նաև անհրաժեշտ վերանայումներով, ուստի հարկ ենք համարում սկսել փոքր-ինչ հեռվից:

1. Հայ. *(ե)րկ-/կր-* (*երկինք/երկիր* և այլն) առանձնացումը (բաշխումը)

Հայերենում *երկինք/երկիր* իրությունների երկատումը (դիխտոմիա՝ «բաժանում երկուսի») հիմնված է արտահայտության պլանում

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.08.2023:

(*t*)*րկ*-[*ի*ն(*p*)]/(*t*)*րկ*-(*իր*) ձևով բաղադրելի մասերի՝ տևականի (հարատևի) մշակույթի մեջ լեզվական դրսևորման (արտահայտության պլանի) *-ի*ն(*p*)/-*իր*, *-p*/ø (գրո) հակադրության, նաև (*t*)*րկ*- նույնության վրա, որտեղ *t*-ն նախահավելված (ատգմենտում) տարր է՝ բնորոշ, օրինակ, հայերենին, ուրարտերենին, հունարենին և այլ լեզուների: Մյուս կողմից (ըստ իմաստի՝ բովանդակության պլանի)՝ «մեկը/ոչ մեկը՝ մյուսը» (ըստ առանձնացման՝ բաշխման), «վերև/ներքև» (ըստ դիրքի՝ մի կողմ/մյուս կողմ), «արական/իգական» (ըստ սեռի՝ *ն/ր*), «թեթև/ծանր» (ըստ ձգողության՝ կշռի) հակադրությամբ (հմմտ. հուն. γή «գետին. հող», լատ. terra «հող. երկիր» և այլն) ունենք *երկն-ից* (*ի*-ով հիմք՝ արական), *երկր-ալ* (*ա*-ով հիմք՝ իգական): Այդ երկուսի ընդհանուր արմատն է *-րկ*-ն, որը, ինչպես կտեսնենք ստորև, բնիկ է, ունի հնդեվրոպական (< *k^oer-) ծագում (արմատի լիաձայն աստիճան):

Հ.-ե. *k^oer- արմատից հայերենում կա ոչ միայն *-րկ*- (< **-կր*-՝ հնչաշրջմամբ), այլև *-ւր*- (հիմքակազմ *ն*-ի մոտ՝ *n*. հմմտ. (բրբռ.) *un-ն-ել* «(հատիկը) երկու կես անել. խոշոր աղալ»: Նախկինում բարբառային այս միավորին ուշադրություն չի դարձվել, մանավանդ ի համեմատություն գրականի [-*ւր*-//*-րկ*- (< **-կր*-)]. հմմտ. (*t*)*րկ*-*ան*(*p*) «աղաց. երկանք» // *un*(*ն*)-*ել* «(երկանքով) խոշոր աղալ՝ հատիկը երկու կես անել»):

Ըստ այսմ՝ կարելի է կարծել, որ հայ. (*t*)*րկ*-//*ւր*- (< *k^oer-) լծորդությունը հիմք է հ.-ե. ծագման երկատումային իրությաների ստուգաբանական, այն է՝ ոչ միայն ծագումնային-տիպաբանական, այլև առասպելական-բանաստեղծական խոսքի նոր մեկնաբանության համար¹: Ստորև կանդրադառնանք այդ արմատի հայերեն արտացոլումներին՝ քննված ցեղակից լեզուների հետ հնարավոր կապի համատեքստում:

երկինք/երկիր միավորների, այսպես կոչված, հակադրյալ համադրությունը հնդեվրոպական բանաստեղծական խոսքի հնագույն նմուշներից է: Այն հայերենի դեպքում ավելի քան հին ժամանակների երևույթ է, որ սկզբնապես բանավոր, հետագայում գրավոր

1 Հմմտ. **Иванов В. В.**, Об исследовании древнеармянской фонологической системы и ее отношение к индоевропейской, «Вопросы языкознания», М., 1962, N 1, էջ 41:

(շնորհիվ Խորենացու) կա հայոց լեզվական մշակույթում. այդ երկույթի վերաբերյալ եղած մեկնությունը ներկայումս չի կարելի համարել լիովին համոզիչ, առավել ևս վերջնական:

Կենդանի արարածների պատկերացմանը, անկախ նրանց զարգացման աստիճանի ժամանակային, տարածքային և սեռային տարբերություններից, խորթ չէ երկատունը: Նախնական (պրիմիտիվ) ժամանակներից ի վեր մինչև ցեղակցորեն առանձնացած լեզվախմբերի հասկանալի ձևերում այդ երկատունային մտածողությունն արտահայտվել է տարբեր ըմբռնումների նշանակման (կամ անվանման) մեջ: Դա ապացուցելի է ոչ միայն հնդեվրոպական, այլև ուրիշ տիպի լեզուներից մեզ հայտնի նախնական նշանակումների հիման վրա:

2. Հայ. *երկու* «երկու» բառի ստուգաբանությունը

Այս դեպքում կատարում ենք արմատի տարբերակային առանձնացում հնդեվրոպական նախաձևի առնչությամբ, նախ՝ ըստ ավանդական (դասական) համեմատաբանության փորձերի, այնուհետև՝ ըստ նոր ուսումնասիրությունների տվյալների:

Հայ. *երկու* «երկու» բառի ստուգաբանությունը, որը ժամանակին առաջարկել է Ս. Բուգեն, և որը լրացումներով հավանության է արժանացել Ա. Մեյերի կողմից, հետագա գրեթե բոլոր աշխատանքներում մնում է միակ հավանականը, այն է՝ բառը ծագել է հ.-ե. *dw-արմատից:

Նկատենք, որ ժամանակին բառի ստուգաբանության հարցում այլ՝ անշուշտ ավելի իրական և համաբանական (անալոգիական) մեկնություն է տվել հ. Ս. Տերվիշյանը, հատկապես բառարմատի (*երկու*, իմաստը՝ «զույգ») բաղադրիչների ձիշտ առանձնացման առումով (արմատ՝ *կր-*, օր.՝ *կր-կին*, որից հնչաշրջմամբ (ինվերսիա)՝ *րկ-*, իսկ *ե-*ն հավելված է, *ու-*ն՝ երկակի թվի նշանակիչ)²:

Նման դեպքերում առհասարակ գործ ունենք հնչյունափոխական այնպիսի երևույթների հետ, որոնք գործել են տարբեր ժամանակներում, և ինչպես այս, այնպես և նույն արմատից բխող այլ

2 Տե՛ս **Տերվիշյան Ս.**, Հնդեվրոպական նախալեզու, Կ. Պոլիս, տպ. Նշան Կ. Պէրպէրեան, 1885, էջ 131:

կարգի բառերի զուգահեռ առկայությունը հայերենում փաստում է դրանց ծագման ոչ նույնժամայն դրսևորումների մասին: Եվ դա այդպես է, քանի որ դրանցում, ինչպես նաև այլ կարգի բաղաձայնական փոփոխությունների ենթարկված հայերեն զգալի թվով բառերում սահմանելի են հնչյունական տարբեր չափորոշիչներ, այլ կերպ ասած՝ դրանք հետևանք են տարբեր ժամանակներում հանդես եկած հնչյունական օրենքների³:

Նման բառերի ծագման մեկնաբանությունը և ժամանակագրությունը ցույց են տալիս, որ դրանց մի մասն այս կամ այն ժամանակային կտրվածքում կարելի է դիտել իբրև գործուն օրենքների դրսևորման արդյունք, իսկ մյուս մասը՝ շեղումներ կամ բացառություններ այդ օրենքներից: Խնդիրն այն է, թե օրենքները գործել են նո՞ւյն ժամանակում, լեզվի զարգացման միևնո՞ւյն փուլում, թե՞ հնչյունական զարգացման («փոփոխության») առումով հաջորդել են միմյանց: Այս վարկածը թերևս կարելի է տարածել այն դեպքերի վրա, երբ հայերենում առկա են պարզ և քմայնացած կամ շնչեղացած բաղաձայններով բառերի տարբերակներ, ընդամին՝ իմաստային և գործառական ակնհայտ տարբերակմամբ:

Ուստի կարծում ենք, որ հայերենի հնագույն շրջանի պատմության փուլերի առանձնացումը պիտի հիմնված լինի լեզվական ավելի մեծ թվով փաստերի վրա, իսկ արտաքին հանգամանքները (փաստերը) պիտի խաղան լրացուցիչ դեր: Ավելին՝ լեզվական փաստերը պետք է մշակել խորությամբ՝ ըստ արտահայտության և բովանդակության պլանների հաշվառման, այն է՝ իրականացնել համեմատական-տիպաբանական քննություն՝ հիմնված թե՛ լեզվաբանական (հնչյունական՝ ներքին վերականգնման, արտաքին համեմատության, համաբանության և տիպաբանական զուգորդման մեթոդների գործադրման), թե՛ արտալեզվաբանական (արմատի կազմության՝ բառի բնիմաստի (էտիմոնի) վեր հանման, առասպելական կամ դիցական, ազգաբանական առնչությունների) պարզաբանման վրա, իսկ հարկ

3 Հմնտ. **Иванов В. В.**, Заметки по сравнительно-исторической индоевропейской поэтике: 2. Индоевропейская поэтическая формула в древнейшем армянском стихотворении, “То Нопор Роман Jakobson”, The Hague-Paris, 1967, էջ 981-984, **Макаев Э. А.**, Общая теория сравнительного языкознания, М., «Наука», 1977, էջ 154-176:

եղած դեպքում՝ մշակել նոր մեթոդներ և հանդես բերել նոր մոտեցումներ՝ հարցերի առավել խոր պարզաբանման համար:

3. Անդրադարձ ստուգաբանական նախորդ փորձերին

Հայոց լեզվի պատմության փուլ առ փուլ ուսումնասիրությունը մեթոդապես անհրաժեշտ է, որի պայմաններում կրացառվեն ամեն կարգի ենթադրությունների և «տեսությունների», տարբեր վարկածների ձևով ի հայտ եկող պատկերացումները:

Այսօր, ինչ խոսք, հին է Ա. Մելեի և այլոց կարծիքը հայ. *երկինք* և *երկիր* միավորների ծագման վերաբերյալ, այն է՝ թե՛ հնչյունապես և թե՛ մանավանդ իմաստով դրա ծագումը հ.-ե. *dw- (նոր նշանակմամբ՝ *t^h-o- [*t^h-o]) ձևից, որն առ այսօր համարվում է թեական, այլև անառարկելի:

Այնուհետև՝ կան լեզուներ, որոնցում 2-9 հաշվարկի մեջ բացակայում է 1-ի հակադրությունը (հնմտ. հոլովման համակարգում ուղղականի և մյուս հոլովների հակադրությունը). խուռիերենում, օրինակ, հատուկ նշանակում չկա «մեկ» թվականի համար, նույնը՝ շումերերենում և այլն⁴:

Հայերենում, ըստ Հ. Աճառյանի, բնիկ են *երկ-* բաղադրիչով հետևյալ կազմությունները՝ *երկայն*, *երկան*, *երկար*, *երկեան* (< **երկհիասան*), *երկիր* (տե՛ս *երկնչեղ*), *երկնչիլ*, *երկու*, բայց ոչ *երկին*, *երկիր* բառերը, որոնք համարվում են «անհայտ ծագման»⁵, իսկ ըստ Գ. Զահուկյանի՝ բնիկ են նաև վերջին երկուսը (թեև հարցականով)⁶:

Անդրադառնանք սրանց ավելի մանրամասն՝ նոր տվյալների հիման վրա, նաև անհրաժեշտ ճշգրտումներով և լրացումներով:

Նախ՝ Հ. Աճառյանը չի առանձնացնում *երկ-* արմատ, այլ *երկն* և *երկիր* ձևերի հետ այն հղում է *երկնչեղ* «վախենալ» բային (< հ.-ե. *dwi «վախենալ»): Նույն կերպ է վարվում նաև *երկնեղ* բայի դեպ-

4 St' u Гамкрелидзе Т. В., Иванов В. В., Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, с предисловием Р. О. Якобсона, Тбилиси, изд-во Тбилисск. ун-та, 1984, էջ 844:

5 St' u Աճառեան Հ. Հ., Հայերէն արմատական բառարան, հատ. 2, Եր., ԵՊՀ հրատ., 1973, էջ 60-67: St' u նաև Աղայան Է. Բ., Բառարանական և ստուգաբանական ուսումնասիրություններ, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1974, էջ 65-69:

6 St' u Զահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., «Ասողիկ» հրատ., 2010, էջ 226-228:

քում: Իսկ ըստ Գ. Ջահուկյանի՝ «Կասկածելի պետք է համարել Ֆրիսկի կողմից *երկն*-ի և *երկ*-ի միացումը իրար հետ, եթե ձիշտ է Աճառյանի կարծիքը *երկ*-ի իրանական ծագման մասին»⁷: Գ. Ջահուկյանը *երկնել* (*-իլ*) ձևին անդրադառնում է *երկն*-ի բառահողվածում հ.-ե. *edĒōn (< *ed-) «ծննդյան ցավ (քաշել)» իմաստով⁸, բառարանում ևս այն բերում է *երկն*-ի բառահողվածում (*երկն* < հ.-ե. *ed-Ēōn (< *ed-)), այս անգամ՝ «ուտել» իմաստով, ընդ որում՝ հարցականով⁹:

երկնչիլ (< *dwi «վախենալ») բառի դեպքում Հ. Աճառյանը գրում է. «Հայ. *երկ*- և հնիս. dwi արմատների ձայնական համեմատությունը ճշտիվ նույնն է՝ ինչ որ *երկու* և dwō: Մեր ձևերի մեջ պարզական արմատն է *երկ*-, որից *ն*, *չ*, *նչ* ածանցիչներով և *-իղ*, *-ուր* մասնիկներով հառաջացած են *երկն*, *երկչուր*, *երկնչիլ*, *երկիղ*: Նշանակությանց կողմից ամենահարուստը հայերենն է, որովհետև ո՛չ միայն «երկյուղ, վախ, սարսափ» նշանակությունն է պահում, այլև «ցավ» նշանակությունը, որ իրանյանների մեջ միայն կա՝ *երկունք* = պիլ. bēš (IEW, 1, 817, Ernout-Meillet, 260)»¹⁰:

Գ. Ջահուկյանը չունի առանձին *երկնչիլ*, այլ այն տալիս է *երկն-ն*-ի (*երկն-ն* «վախ» (< *dĒi- [*dĒei-] «վախենալ»)) բառահողվածում¹¹: Հայտնի է, որ *երկնչիլ* «վախենալ» բառի *չ*-ն («ձույլ աֆրիկատ») գալիս է հ.-ե. *-sk^[h]- ածանցից¹², ուստի մնում է *երկն*-, որը ծագում է հ.-ե. *(e)rk- արմատից¹³, և կարելի է մտածել, որ *երկնչիլ* ձևում *ն*-ն ևս անջատելի բաղադրիչ է:

Ըստ Հ. Աճառյանի՝ *երկայն* (< *երկ-այն*) < հ.-ե. *dewə (*dowə, *dwā, *dĒ-), «ըստ որում՝ հնիս. dw տալիս է հայ. *երկ*- (հմմտ. *երկու*, *երկնչել*), ուստի հնիս. dwāro- տալիս է հայ. *երկար*, ro-ի փոխարեն ռնգային մասնիկով՝ *երկայն* (իբրև հուն. δφά). միևնույն ժամանակ dewñ ձևից *րևել* և dowñ ձևից *րոկալ*: Այսպես ուրեմն հնիս. երկավանկ արմատների և ձայնդարձի օրենքների համաձայն նույն ծագումն ունին և նույն արմատից են բխում հայ. *երկայն*, *երկար*, *րևել*

7 Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., Հայկ. ՍՍՀ ԳԱ հրատ., 1987, էջ 163:

8 Տե՛ս նույն տեղում, էջ 121, 209:

9 Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 227:

10 Աճառյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 65:

11 Տե՛ս նույն տեղում, էջ 227:

12 Տե՛ս Гамкредидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 120:

13 Տե՛ս նույն տեղում, էջ 133:

և *տրկայ* բառերը»¹⁴: Իսկ ըստ Գ. Ջահուկյանի՝ *երկայն* (< *երկ-այն*) < հ.-ե. *dĕā-ino (*deu-)¹⁵:

Հ. Աճառյանը գտնում է, որ *երկար* «երկար (թե՛ ըստ ժամանակի և թե՛ ըստ տարածության)» < *dwāro-. «ընդարձակ մեկնությունը տե՛ս *երկայն*»¹⁶. հմնտ. «ուղիղ մեկնեց Մեյե» (Meillet, REA, 4, էջ 1-4): Իսկ ըստ Գ. Ջահուկյանի՝ *երկար* «երկար» < *dwāron «երկարատև» (< *t'ĕ-aH-)¹⁷. սրա լիահունչ տարբերակն է հայ. *տեւեւ* «մնալ. տևել» (< *t'eĕ-) բառը¹⁸: Այնուհետև՝ *երկար* «երկար» (< *duā-ro' *deu- [*duā-, *dū-]), «հեռանալ, հեռու, երկար ժամանակ»¹⁹: Իսկ *երկեամ*-ը համարվում է բաղադրված *երկի-ամ* ձևից, որում *ամ*-ը նշանակում է «տարի», և *երկի-* (< *dĕi-)²⁰, որ ընդունում են հետագայում, սակայն արմատի այլ նշանակմամբ. հմնտ. *t'ĕ-o- (հին՝ *t'o-o) > հայ. *երկու*, *երկի-* բարդ բառերում (*երկեամ* «երկամյա. երկու տարեկան»), հուն. δός(F)ο, δόςω, δι- և այլն²¹:

Այնուհետև՝ *երկու* «երկու». բերվում է մի քանի այլ ձևերի մեջ՝ *երկո-* (օր.՝ *երկուրասան*), *երկի-* (օր.՝ *երկեամ*, *եկերիւր*), *երկ-* (օր.՝ *երկդիմի*), նաև առանձին *երկ* «երկու», որից՝ *երկիր* «երկրորդ»: Ըստ Հ. Աճառյանի՝ ծագում է հ.-ե. *dwo, dwōu ձևից (իզականը՝ dwai, չեզոքը՝ dwoi)²²:

Հ. Աճառյանն ունի մի կարևոր դիտարկում, մի գաղափար, որն այդպես էլ չի զարգացնում. ցեղակից լեզուների տվյալների համեմատության մեջ «ամենից ավելի ձևափոխյալը հայն է, այնքան, որ հնդեվրոպական կերպարանքը բոլորովին անձանաչելի է դարձած: Բայց ըստ որում հայերենի բոլոր թվականները բացատրվում են հնդեվրոպականով, ըստ այսմ պետք է որ *երկու* բառն էլ բացատրվի վերի ձևերով: Հայերենի մեջ *երկու* հին երկակի թվի մնացորդներից է. իր ընկերներից *մի* եզակի, *երեք* և *չորք* հոգնակի

14 Աճառեան Հ. Հ., Հայերէն արմատական բառարան, հատ. 2, էջ 60:

15 Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 118:

16 Աճառեան Հ. Հ., Հայերէն արմատական բառարան, հատ. 2, էջ 61:

17 Տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 230:

18 Տե՛ս նույն տեղում:

19 Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 227:

20 Տե՛ս Ջահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 246:

21 Տե՛ս Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 844:

22 Տե՛ս Աճառեան Հ. Հ., Հայերէն արմատական բառարան, հատ. 2, էջ 65-67:

լինելով՝ այս էլ բնականորեն երկակի միայն կարող էր լինել: Երկակի թվի նշանն է *-ni*. արմատական *երկ-* < dv- ձայնափոխության (իննա՝ հնչյունափոխության – Վ. Հ.) իբրև օրինակ ունինք նաև *երկ-իւղ*, *երկ-այն*, *երկ-ար*. այս բոլորի մեջ *ե* ավելացված է իբրև հենարան (ձայնավոր նախահավելված – Վ. Հ.), որով երկու բառի բուն ձևը կլինի *րկ*, որ շրջված գտնում ենք նաև *կր՝ կր-կին* բառի մեջ (հմմտ. *երեք-կին*, *չորեք-կին* և այլն. բառարանում կա վրիպակ – Վ. Հ.): Այս *րկ* ձևի մեջ *ր* ծագում է *ժ* ձայնի կակղած *ժ* ձևից (հմմտ. *սապարանք* < հայրս. *apadāna*), իսկ *կ* ծագում է *w* ձայնից՝ անշուշտ անցնելով *ւ*-ից (հմմտ. *արեգ* < **rev*): Նկատելի է, որ բոլոր սկյութական լեզուներում (= իրանական բարբառներ – Վ. Հ.) *ժ* դարձած է *ժ*, որով ունինք սողդ. *ծա՝* «երկու» և *ժս* «տասը» (MSL, 17, 158)»: Եզրափակելով նշում է. «Այս ձևերի քննության համար տե՛ս մասնավորապես Meillet, MSL, 11, 394. 12, 227 և 431, 15, 353, 18, 250. Gauthiot, La fin de mot, էջ 76–77)»²³:

Այսպիսով՝ Հ. Աճառյանը վերականգնում է այն, որ հայ. *երկու* «երկու» բառը ծագում է *հ.-ե.* **dĕō-* [**dĕō(u)-*] արմատից, ընդ որում՝ *երկի-* (< **dĕi*), *երկո-* (< **dĕo*) տարբերակներով, այնինչ, ըստ նոր տվյալների, *երկու* «երկու» < *հ.-ե.* *(*e*)*rk*²⁴: Երկրորդ դեպքում հեղի-նակները նույն՝ 133-րդ էջի տողատակում գրում են. «հմմտ. նման հին զարգացում հիսլ. *kvistr*, *kvisl* «ձյուղ». Pokorny 1959, 232»²⁵:

Վերը բերված թե՛ հին և թե՛ համեմատաբար նոր քննություններում տրվող ստուգաբանությունն առարկելի է:

երկին(ք) և *երկիր* բառերի ստուգաբանությունը, ինչպես վերը նշեցինք, պատկանում է Գ. Զահուկյանին, բայց թեականով, որպիսով հավաստիությունը փոքրանում է, նաև վերականգնվող (նախավեզվի հիմք հանդիսացող) ձևը նշվում է ոչ նույնը, ինչը նկատում ենք հեղինակի «Հայոց լեզվի պատմության» մեջ (հմմտ. էջ 84, 117, 123, 166 և այլն. բխեցվում են տարբեր արմատներից): Ըստ այդմ՝ *երկին-* բառի արմատը, ոչ անկախ Պ. Էսապալյանից և Է. Աղա-

23 Նույն տեղում, էջ 66–67:

24 Տե՛ս Զահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 228: Հմմտ. Աճառյան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 66–67, Pokorny J., Indogermanisches etymologisches Wörterbuch, 1, Bern-München, 1959, էջ 228–230, Гамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 133, 844:

25 Гамкрелидзе Т. В., Иванов В. В., указ. соч., с. 133.

յանից, Գ. Զահուկյանը բխեցնում է հ.-ե. *dĕi-n(?) (*dei-) ձևից՝ համարելով հնչյունապես կասկածելի, իսկ բառարանում՝ հ.-ե. *d(i)ĕi-n (*dei-) «փայլել, շողալ» (*-u ածականով)՝ «շողացող երկինք» ձևից և նշում, որ «կան հնչյունական դժվարություններ»²⁶:

Գրեթե նույն կերպ նշվում է՝ *երկիր* < հ.-ե. *er-Ē- (*er-), ընդ որում՝ կրկին հարցականով, այնինչ բառարանում ծագման համար բերվում է հ.-ե. *erdu- (?) [*er- (*er-t-, *er-u-)] ձևը, որն ինչ-որ չափով հեռանում է նախորդից²⁷: Գ. Զահուկյանը գրում է. «*երկիր*-ի համար *er-tĒ- նախաձևը վերականգնված է հեղինակի կողմից՝ գերմ. և կելտական համապատասխան ածականներով ձևերի հիման վրա: Այս դեպքում հնչյունական դժվարությունը վերանում է: Ֆինկը և ապա Պեդերսենը վերականգնում են *er-Ē-, ենթադրելով հետագա ձևափոխություն *երկին*-ի ազդեցությամբ (*erĒ- > *երգ- > *երկ-իր*)²⁸: Հավանական չէ Մեյեի (իմա՝ *երկ-ար*) և Ադայանի [*dhĒer-] առաջարկած ստուգաբանությունները՝ առաջինը՝ ըստ իմաստի, երկրորդը՝ հնչյունապես»²⁹:

4. Նոր փաստեր, նոր առաջարկներ հարցի լուծման առնչությամբ

Այս համատեքստում բոլորովին այլ է *երկանք* բառի ծագման հարցը: Ըստ Հ. Աճառյանի՝ *երկան* «ջաղացք, ջաղացքի քար» (< *g²rāwanā-), ըստ Գ. Զահուկյանի՝ *երկան* «երկանք, աղացաքար, ձեռքի աղորիք» (< *guranā- (*gurāuanā)՝ guer-)³⁰: Վերջինս ճիշտ է նկատում, որ սեմականից հնդեվրոպականին անցած «հնագույն փոխա-

26 Տե՛ս Ժաուկյան Գ. Բ., Очерки по истории дописьменного периода армянского языка, Ер., изд-во АН Арм. ССР, 1967, էջ 226, 228, Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 117, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 227:

27 Տե՛ս Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 123, նույնի՝ Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 227:

28 Տե՛ս Պեդերսեն Հ., Հայերեն եւ դրացի լեզուները, Վիեննա, Մխիթարեան տպարան, 1907, էջ 19, 27, 42, 104, 110, 135 և այլն:

29 Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 166: Հմնտ. Ժաուկյան Գ. Բ., Сравнительная грамматика армянского языка, Ер., 1982, էջ 75:

30 Տե՛ս Աճառեան Հ. Հ., Հայերեն արմատական բառարան, հատ. 2, էջ 61: Հմնտ. Hübschmann H., Armenische Grammatik. Erste Teil: Armenische etymologie, Leipzig, 1895, էջ 445 (Հյուբշման Հ., Հայերենի քերականություն, Եր., 2003, էջ 444-445), Զահուկյան Գ. Բ., Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 227:

ռություն» 24 բառարմատից 13-ը կա հայերենում, որոնցից *երկան*-ը առնչվում է արաբ., եբր. ձևերին. *երկան* (< հ.-ե. *gĒrānā) – արաբ. grn «աղալ», եբր. gōren «կալ»³¹: Նկատենք նաև, որ, ի տարբերություն Ս. Բուզեի և Ա. Մեյեի վարկածի, որ ընդունում են Հ. Աճառյանը և Գ. Զահուկյանը (*երկան* < հ.-ե. *gĒrānā (*gĒer-)), ավելի հավանական է համարվում *երկան* «աղաց. երկանք» բառի ծագումը հ.-ե. *kʷrāĒ- «աղաց» արմատից³²:

Հետագայում ևս փորձեր են արվում հայ. (*ե*)*րկ*- արմատի ծագումը հիմնավորելու ըստ եղած տեսության՝ ավելացնելով խեթալուվական (առանձնապես լուվական) տվյալները³³: Այդ տվյալները բառի համեմատության նոր հնարավորություն են տալիս, այն է՝ (*ե*)*րկ*- արմատի համեմատության տարածում լեզվի բառապաշարի այլ օրինակների վրա:

Ի լրացումն այս ուղղությամբ մինչև այժմ արվածի նշենք, որ նույն արմատից է ծագել հայ. (բրբռ.) *աննել* «երկանքով հատիկը խոշոր աղալ՝ երկու կտոր անել» բառը արմատի կազմիչ առաջին հնչույթների դրափոխությամբ, այն է՝ պայթական հետնալեզվային խուլի շփականացմամբ՝ *-կր-//*-սր- (տե՛ս Մշ., Աշ., Սասուն, Մոկս, Ուրմ. և այլն). հմմտ. *կոկորդ*//*սոսորդ* «կոկորդ» (*կոկորդ* < հ.-ե. *gĒo(r)-gĒor. *սոսորդ*-ը, ըստ Հ. Աճառյանի, «անստույգ» է, ըստ Գ. Զահուկյանի՝ անհավանական, թեև դրանք նույնն են իմաստով, ուրեմն նաև հնչումով, նաև *սկունդ* «շան ձագ» // *շուն* (< *kʷĒon, *kʷĒon-to) (?) և այլն:

Բնատնտեսության մեջ առաջնային նշանակության այդ գործիքը և դրա գործածելիությունը (այս դեպքում՝ գործառույթը), որ անվանապես ծագում են նույն արմատից, իմաստային տարբերակմամբ ավելի հավաստի են դարձնում քննության առարկա բառերի «երկու մաս՝ երկակի և այլն» իմաստի ընդհանրությունը: Այդպես նաև *երկու* «երկու» բառը, որը, մեր կարծիքով, ծագում է նույն՝ հ.-ե.

31 Տե՛ս Զահուկյան Գ. Բ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 450:

32 Տե՛ս Գамкрелидзе Т. В., Иванов В. В., նշվ. աշխ., էջ 693–694:

33 Տե՛ս Իванов В. В., Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агну, «Историко-филологический журнал», 1983, N 4, էջ 22–43, նույնի՝ Первоначальная глубинная структура текста гимна Вахагну и проблемы древнеармянской этимологии, «Международный симпозиум по армянскому языкознанию: Ереван, 21–25 сентября 1982 г. Доклады», Ер., изд-во АН Арм. ССР, 1984, էջ 61–86:

*k^oer- արմատից³⁴: Իսկ ավանդական համեմատաբանության, նաև դրա լրացում նոր ուսումնասիրությունների՝ *երկու* «երկու» բառի համար նշած *dĕ^{1/4}u [*dĕ^{1/4}(u)] (ըստ Գ. Զահուկյանի) կամ *dwo [*dw^{1/4}u] (ըստ Հ. Աճառյանի և նախորդների) ընդհանուր արմատը (ծագման առումով՝ անկախ ձայնավորման տարբերությունից) ընդհանուր պետք է համարել միայն հայ. *յրեւ(եւ)* «(ժամանակի մեջ) երկարել՝ շարունակվել. տոկալ», *յրկ(ամ)* «դիմացկուն լինել, դիմանալ» և այլ բառերի հետ³⁵:

Նման քննությունը նոր որակ է հայերենի համեմատական-տիպաբանական ուսումնասիրության բնագավառում, ըստ այդմ՝ յուրովի հեռանկարային գիտության զարգացման առումով³⁶:

Եզրակացություններ

1. Հայ. *(ե)րկ-/յր-* լծորդական արմատի գոյությունը վաղուց նկատված է, սակայն դիտարկված չէ ծագումնային այն հավաստիության մեջ, որ կարելի է հիմնավորել հնդեվրոպական լեզվաբանության նորագույն տվյալների հիման վրա:

2. Ա. Մելեի և մյուս ուսումնասիրողների տեսակետը հայ. *երկինք* և *երկիր* միավորների ծագման վերաբերյալ, որ առաջ է քաշվել ժամանակին և ընդունվել է նաև հետագայում, թե՛ հնչյունապես և թե՛ մանավանդ իմաստով ներկայումս թեական է, ոչ հավաստի:

3. Ըստ այս հարցում առաջ քաշված նոր տվյալների՝ հիշյալ լծորդ արմատը ծագում է հ.-ե. *k^oer- արմատից, որ հայերենում (գրականում և բարբառներում) ունի մի շարք ձևացումներ (*երկու*, *երկար*, *երկնչել*, *յրկին*, *սոնել* և այլն)՝ նույնությամբ կամ դրափոխմամբ:

34 Սա նաև առանձին քննության հարց է:

35 Տե՛ս **Աճառեան Հ. Հ.**, Հայերէն արմատական բառարան, հատ. 4, Եր., ԵՊՀ հրատ., 1979, էջ 416, **Զահուկյան Գ. Բ.**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, էջ 119, 162 և այլն:

36 Հմմտ. **Иванов В. В.**, К этимологии балтийского и славянского названий бога грома, «Вопросы славянского языкознания - 3», М., 1958, էջ 101-111: Տե՛ս նաև **Knobloch J.**, Zu armenisch erkin “Himmel”, erkir “Erde”, “Handēs amsoreay” [= «Հանդէս ամսօրեայ» (ամսագիր)], Վենետիկ, 1961, N 75, էջ 541-544:

4. Նման վերլուծությունը հեռանկարային է ոչ միայն ինքնին, այլև առհասարակ համեմատական-տիպաբանական հավաստիության (վերիֆիկացիայի) առումով, ամենից առաջ՝ հայերենի նախագրային շրջանի պատմության համար:

Վազգեն Գ. Համբարձումյան – գիտական հետաքրքրությունների շրջանակն ընդգրկում է ընդհանուր և համեմատական լեզվաբանությունը, հայոց լեզվի պատմությունը, լեզուների տիպաբանությունը, հայ բարբառագիտությունը: Զբաղվում է հայերենի համեմատական ուսումնասիրությամբ, հայերենի ստուգաբանությամբ՝ կատարելով լրացումներ և ձգգրումներ: Հեղինակ է երեք տասնյակից ավելի մենագրությունների, շուրջ երկու հարյուր տարբեր լեզուներով լույս տեսած գիտական հոդվածների, կատարել է գրաբարից աշխարհաբար երեք ծավալուն աշխատությունների թարգմանություն:

Էլ. հասցե՝ vazgengurgeni@mail.ru, hambardzumyanvazgen01@aspu.an

Summary

**CONSTRUCTION OF INDO-EUROPEAN POETIC SPEECH'S
DICHOTOMIC DIVERSITY**

(In the context of the relations of related languages)

Vazgen G. Hambardzumyan
Doctor of Sciences in Philology

Kew words – Bisection (dichotomy). poetic speech. generic relation. etymological review, restoration, comparison between the data of the related languages, the use of the new data of the Armenian language.

Dichotomic distribution of the reality as a way of thinking was also specific to the peoples carrying the Indo-European proto-language, whose various reflections are known in the epic (mythical-poetic) sections of related languages.

In this article we will look at one of such reflections, especially by combining the new data accumulated in that field, in some cases, also with necessary revisions.

Etymology of the Armenian word *երկու* [erku] "two", once proposed by S. Bugge, and approved with additions by A. Meillet, remains the only probable one in almost all subsequent works, namely, the word is considered to be derived from IE root *dw-.

Today the opinion of Meillet and other researchers is the same on the origin of the *երկինք* [erkink^c] «sky» / *երկիր* [erkir] «earth» phonetically and especially in meaning, its origin is from IE *dw- (renamed *t^ho- [*t^h-o]), which is still considered dubious, but also unobjectionable.

In addition to what has been done so far in this direction, it should be noted that Armenian came from the same root. (brbr.) srenel "grind the grain coarsely with the kidney to make two pieces" with the change of the first sounds forming the root, that is, with the assimilation of the plosive post-lingual nipple *-ly- [kr] // *-ur- [sr] (see Mush., Alsh., Sasun, Moks, Urm., etc.). cf. *կոկորդ* [kokord] // *սոսորդ* [sosord] "throat" < IE *g^ho(r)-g^ho(rl); word *սոսորդ* [sosord], according to H. Acharyan, is "inaccurate", according to G. Jahukyan, improbable, although they are the same in meaning (so also in sound), also Armenian *սկունդ* [skund] «puppy» // *շուն* [šun] «dog» (< IE.-e. *k^hon, *k^hon-to) (?) etc.

The existence of the Armenian root (*երկ*- [(e)rk] / *կր*- [kr] has been observed for a long time, but it has not been considered in the reliability of the origin, which can be justified on the basis of the latest data of Indo-European linguistics.

According to the new data, the above-mentioned root originates from IE *k^her- «heavy», which in Armenian (in literature and dialects) has a number of forms (*երկու* [erku] «two», *երկար* [erkar] «long», *երկնէլ* [erkn^hel] «to tremble, fear; be terrified», *կրկին* [krkin] «again; anew», *սննել* [s^hnel] «to freeze» etc.) with the same or its modification.

Such an analysis is prospective not only in itself, but also in terms of comparative-typological reliability (verification) in general, above all for the history of the pre-writing period of Armenian.

ДИХОТОМИЧЕСКОЕ ВЫДЕЛЕНИЕ АРМЯНСКОЙ ПОЭТИЧЕСКОЙ РЕЧИ ИНДОЕВРОПЕЙСКОГО ПРОИСХОЖДЕНИЯ

В контексте взаимоотношений родственных языков

Вазген Г. Амбарцумян

Доктор филол. наук

Ключевые слова - раздвоенность (дихотомия), поэтическая речь, генетические взаимоотношения, этимологический пересмотр, реконструкция, сравнение между данными родственных языков, применение новых данных армянского языка.

Дихотомическое распределение (дистрибуция) действительности как способа мышления было свойственно и народам-носителям индоевропейского праязыка, различные отражения которого известны в эпических (мифопоэтических) отрывках родственных языков.

В данной статье рассматривается одно из таких отображений, путем сопоставления новых данных, накопленных в этой области, в некоторых случаях и с необходимыми доработками.

Этимология арм. слова *երկու* [erku] ‘два’, предложенная в свое время С. Буге и утвержденная с дополнениями А. Мейе, остается единственно возможной почти во всех последующих работах, а именно: слово считается производным от и.-е. корня *dw-.

Сегодня, конечно, мнение А. Мейе и других исследователей о происхождении единицы *երկինք* [erkink^c] ‘небо’ / *երկիր* [erkir] ‘земля’ из и.-е. *dw (переименованной в *t^hu-о- [ранее *t^ho-о]) нельзя считать убедительным, оно до сих пор считается сомнительным, а также вызывает возражения.

Помимо исследований, проведенных в этом направлении до сих пор, отметим, что в армянском языке от того же корня произошел арм. (диал.) *սրնակ* [sɪnɛk] ‘крупно растереть зерно ручным жерновом, состоящим из двух частей’ с изменением первых звуков, образующих корень, т.е. вместо заднеязычного взрывного имеется фрикативный с- *-կր [kr] // *-սր- [sr] (см. диалекты Муша, Алашкерта, Сасуна, Мокса, Урмии и др.); ср. с *կրկորդ*

[kokord] // *ununpṛ* [sosord] ‘горло’ (*ḥnḥpṛṛ* [kokord] < и.-е. *gʷo(r)-gʷo(r). Слово *ununpṛ* [sosord], по Р. Ачаряну, «неизвестного происхождения», а по Г. Джаукяну, данное происхождение маловероятно, хотя в значении (также и по звучанию) они сходны; ср. также арм. *uḥnḥ* [skund] ‘щенок’//*ḥnḥ* [šun] ‘собака’ (< *kʷon, *kʷon-to) (?) и т.д.

Наличие в языке вариантов арм. корня (*t*)*pṛ*- [(e)rk] / *ḥp*- [kr] было замечено давно, но не изучалась достоверность их происхождения, что можно обосновать на основании новейших данных по индоевропейскому языкознанию.

Согласно новым данным, представленным в данной статье, указанный дублетный корень (*t*)*pṛ*- / *ḥp* происходит от и.-е. корня *kʰer- ‘тяжелый’, который в армянском языке (в литературном языке и в диалектах) имеет ряд форм (*tṛḥn* [erku] ‘два’, *tṛḥp* [erkar] ‘длинный’, *tṛḥḥḥ* [erknčʰel] ‘бояться, пугаться; ужасаться’, *ḥpḥḥ* [krkin] ‘вторично, вновь’, *unḥḥ* [sɪnel] ‘крупно растереть зерно ручным жерновом, состоящим из двух частей’ и т.д.) с тем же расположением слогов или же с их метатезой.

Такой анализ перспективен не только сам по себе, но и с точки зрения сравнительно-типологической достоверности (верификации) в целом, прежде всего для изучения истории дописьменного периода армянского языка.

REFERENCES

1. **Ačaṙean H. H.**, Hayerēn armatakan bararan, hat. 2, Yer., YEPH hrat., 1973, 688 ēj, hat. 4, Yer., YEPH hrat., 1979, 674 ēj (**In Armenian**).
2. **Aghayan Ē. B.**, Baṙakʻnnakan yev stugabanakan usumnasirutʻyunner, Yer., HSSH GA hrat., 1974, 168 ēj (**In Armenian**).
3. **Dzhaukjan G. B.**, Ocherki po istorii dopisʻmennogo perioda armjanskogo jazyka, Jer., izd-vo AN Arm. SSR, 1967, 384 s. (**In Russian**).
4. **Dzhaukjan G. B.**, Sravnitelʻnaja grammatika armjanskogo jazyka, Jer., izd-vo AN Arm. SSR, 1982, 275 s. (**In Russian**).
5. **Gamkrelidze T. V., Ivanov V. V.**, Indojeuropejskij jazyk i indoevropcejcy: Rekonstrukcija i istoriko-tipologičeskij analiz prajazyka i protokulʻtury, s predislavijem R. O. Jakobsona, t. I-II, Tbilisi, izd-vo Tbilissk. un-ta, 1984, 1131 s. (**In Russian**).
6. **Hyubshman H.**, Hayereni kʻerakanutʻyun, Yer., YEPH hrat., 2003, 580 ēj (**In Armenian**).
7. **Ivanov V. V.**, K etimologii baltijskogo i slavjanskogo nazvanij boga groma, “Voprosy slavjanskogo jazykoznanija”, M., 1958, N 3, s. 101-111 (**In Russian**).
8. **Ivanov V. V.**, Ob issledovanii drevnearmjanskoj fonologičeskoj sistemy i jejo otnoshenije k indoevropcejskoj, “Voprosy jazykoznanija”, M., 1962, N 1, s. 37-41 (**In Russian**).
9. **Ivanov V. V.**, Pervonachalʻnaja glubinnaja struktura teksta gimna Vaxagnu i problemy drevnearmjanskoj etimologii, “Mezhdunarodnij simpozium po armjanskomu jazykoznaniju:

- Jerevan, 21-25 sentjabrja 1982 g., Doklady”, Jer., izd-vo AN Arm. SSR, 1984, s. 61-86 **(In Russian)**.
10. **Ivanov V. V.**, Vydelenije raznyx xronologicheskix slojev v drevnearmjanskom i problema pervonachal’noj struktury teksta gimna Va(x)agnu, “Istoriko-filologicheskij zhurnal”, M., 1983, N 4, s. 22-43 **(In Russian)**.
 11. **Ivanov V. V.**, Zametki po sravnitel’no-istoricheskoy indojeuropejskoj poetike: 2. Indojeuropejskaja poeticheskaja formula v drevnejšem armjanskom stixotvorenii, “To Honor Roman Jakobson”, The Hague-Paris, 1967, s. 981-984 **(In Russian)**.
 12. **Jahukyan G. B.**, Hayeren stugabanakan bararan, Yer., “Asoghik” hrat., 2010, 819 ėj **(In Armenian)**.
 13. **Jahukyan G. B.**, Hayots’ lezvi patmut’yun. nakhagrajin zhamanakashrjan, Yer., Hayk. SSH GA hrat., 1987, 748 ėj **(In Armenian)**.
 14. **Makajev E. A.**, Obsh’aja teorija sravnitel’nogo jazykoznanija, M., “Nauka”, 1977, 206 s. **(In Russian)**.
 15. **Pedersĕn H.**, Hayerĕn yew drats’i lezunerĕ, Vienna, Mkit’arean tparan, 1907, 264 ėj **(In Armenian)**.
 16. **Tĕrvishean S.**, Hndewropakan nakhalezu, K. Polis, tp. Nshan K. Pĕrpĕrean, 1885, 206 ėj **(In Armenian)**.